Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԽՈՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելի սգակիր Աբրահամյան ընտանիք և բարեպաշտ հայորդիներ.

Վերջին հրաժեշտով այսօր մենք հայ մեծերի Պանթեոն ենք ուղեկցում բեմարվեստի մեծ երախտավոր Խորեն Աբրահամյանին: Աղոթքն է այս պահին մեր բոլորի շուրթերին և նրա հետ կապված հուշերն են մեր հոգիներում: Արդարև, սիրված ու ճանաչված էր Խորեն Աբրահամյանը: Ճանաչված էր իր կերպավորած հերոսներով, իր բեմադրություններով, որոնք վկայություններն են նրա մեծ ու ազնիվ հոգու և անսքող ու անուրանալի տաղանդի:

Հայ բեմարվեստի մի ողջ դարաշրջան է ներկայացնում Խորեն Աբրահամյանը: Դարաշրջան, երբ Հայրենիքին ու ժողովրդին ծառայության ոգով, բարձր արվեստի փնտրտուքով օրավուր զարգանում ու վերելք էր ապրում հայ թատրոնն ու կինոն: Այդ վերընթաց ու լայնահուն ճանապարհին ինքնահաստատվեց ու աստվածատուր իր շնորհքն ու կարողությունները շռայլորեն հայ բեմարվեստ բերեց Խորեն Աբրահամյանը: Նա և իր սերնդակիցները երջանկությունն ունեցան ուսանելու և պատկառելու մեր թատերական արվեստի դասական մեծություններից, բայց նաև վստահորեն կանգնելու նրանց կողքին. Վաղարշ Վաղարշյան, Վահրամ Փափազյան, Հրաչյա Ներսիսյան, Ավետ Ավետիսյան և պանծալի այլ անուններ: Խորեն Աբրահամյանի ողջ կյանքը նույնպես ծառայություն, անդուլ ջանք ու նվիրում եղավ արվեստին, որպեսզի արվեստի միջոցով մարդկային բարձր արժեքները մշտապես կարևորվեն մեր կյանքում:

Արդարև, հայ թատերական արվեստը կորցրեց իր մեծ գործիչներից մեկին, սակայն մեր ժողովրդի կյանքում անկորնչելի են այն ամենը, ինչ ստեղծել ու մարմնավորել է Խորեն Աբրահամյանը՝ տաղանդավոր արվեստագետը, դերասանն ու բեմադրողը: Նա կերտել է հավատ մարդու հանդեպ, հավատ կյանքի հանդեպ, բարու հաղթանակի հանդեպ:

Վերջին հրաժեշտի այս պահին հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի՝ Մեր խորին ցավակցությունն ենք բերում հանգուցյալի ընտանիքին, բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Աղոթում ենք, որ Ողորմած Աստված երկնային իր երանական բարձունքներում խաղաղության ու լույսերի մեջ ընդունի հանգուցյալի հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգևի նրա հարազատներին և նրա կորուստը սգացող գործընկերներին:

Խունկ և օրհնություն Խորեն Աբրահամյանի բարի և անմահ հիշատակին:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»: Ամեն:

Ս. Էջմիածին,
11 դեկտեմբերի 2004 թ.